ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՇԵՆԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

«25»հունվարի 2018թ.

ՀՀ Լոռու մարզպետ
Ա. Նալբանդյանին

N 12

Կից Ձեզ ենք ներկայացնում Շենավան համայնքի ղեկավարի թիվ 1 և թիվ 2 որոշումները:

Առդիր՝ 11/ տասնմեկ / թերթ:

Համայնքի ղեկավար Գ. Դունամալյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ

ՇԵՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

---

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«25» հունվարի 2018 թվականի N 01

## ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԵՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՄԱՍԻՆ

Աղետների ռիսկերի նվազեցման միջոցառումների կազմակերպման և իրականացման, արտակարգ իրավիճակներում գործելու ընթացակարգերի սահմանման, արտակարգ իրավիճակներում համայնքի բնակիչների պաշտպանության կազմակերպման նպատակով, ղեկավարվելով «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի դ) կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շենավան համայնքում հաստատել.

1) Աղետների ռիսկի կառավարման (այսուհետ՝ ԱՌԿ) խորհրդի կազմը ՝ համաձայն հավելված N 1-ի.

2) ԱՌԿ խորհրդի աշխատակարգը ՝ համաձայն հավելված N 2-ի.

2. Խորհրդի անդամներին՝

1) մինչև սույն թվականի մայիսի 15-ը մշակել Լոռու մարզի Շենավան համայնքի աղետների ռիսկի կառավարման պլանը.

2) յուրաքանչյուր տարվա փետրվարի 15-ը իրականացնել համայնքի ԱՌԿ պլանի ճշգրտում:

3. ԱՌԿ խորհրդի ղեկավարի տեղակալին՝ սույն որոշման 1-ին կետով ստեղծված ԱՌԿ խորհրդի ներգրավված յուրաքանչյուր անձի կամ անձանց փոփոխության դեպքում 5-օրյա ժամկետում ներկայացնել սույն որոշման փոփոխման վերաբերյալ որոշման նախագիծ:

4. Որոշումն ուժի մեջ է ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ________________ Գ.ԴՈՒՆԱՄԱԼՅԱՆ

ստորագրություն

Հավելված N 1
Շենավան համայնքի ղեկավարի
«25» հունվարի 2018թ-ի N 01 որոշման

# ԿԱԶՄ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԵՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

**Համայնքի ԱՌԿ խորհրդի կազմը՝**

1. խորհրդի ղեկավար՝ Գարուշ Դունամալյան /համայնքի ղեկավար/,
2. խորհրդի ղեկավարի տեղակալ-տարհանման և պատսպարման պատասխանատու՝ Հմայակ Սարգսյան /համայնքապետարանի առաջատար մասնագետ/,
3. խորհրդի քարտուղար՝ Նարեկ Աբրահամյան ,

4. խորհրդի անդամներ՝
   1) ավագանի Գագիկ Մովսիսյան,
   2) ավագանի Պարույր Կարապետյան,
   3) ավագանի Ստյոպա Կարապետյան,
   4) ոլորտային պատասխանատուներ՝

ա. հրշեջ-փրկարարական աշխատանքների պատասխանատու՝ Իգիթ Աբրահամյան
բ. հասարակական կարգի պահպանման պատասխանատու՝ Վահագն Գասպարյան
գ. տրանսպորտային ապահովման պատասխանատու՝ Սերգեյ Հայրապետյան,
դ. կապի և տեղեկատվական փոխանակման պատասխանատու՝ Գալյա Դունամալյան,
ե. բժշկական օգնության կազմակերպման պատասխանատու՝ Վարդուհի Մանուկյան,
զ. կենսաապահովման կազմակերպման պատասխանատու՝ Հուսիկ Մխիթարյան,
է. կոմունալ-էներգետիկ ապահովման պատասխանատու՝ Ֆիրդուս Աբրահամյան,
ը. ինժեներական միջոցառումների ապահովման պատասխանատու՝ Անդրուշ Կարապետյան,
թ. դիակների ճանաչման և հուղարկավորման կազմակերպման և հաշվառման պատասխանատու՝ Արտաշես Դունամալյան,
ժ. անհայտ կորածների և ընտանիքի անդամների միավորման, կորած/միայնակ մնացած երեխաների ու ծերերի հարցերով զբաղվող պատասխանատու՝ Ռազմիկ Սարգսյան:

Հավելված N 2
Շենավան համայնքի ղեկավարի
«25» հունվարի 2018թ-ի N 01 որոշման

# ԱՇԽԱՏԱԿԱՐԳ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԵՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

**1. ԱՌԿ խորհրդի աշխատակարգը**

1) **Սույն** աշխատակարգով սահմանվում են (այսուհետ՝ Աշխատակարգ) Շենավան համայնքի ԱՌԿ խորհրդի լիազորությունների և գործառույթների իրականացման ընթացակարգերը:

2) Համայնքի ԱՌԿ խորհրդի նիստերը գումարվում են Շենավանի համայնքապետարանում, իսկ դրա անհնարինության դեպքում՝ ԱՌԿ խորհրդի ղեկավարի որոշմամբ:

3) Համայնքի ԱՌԿ խորհրդի նիստի ժամանակ քննարկվում են Համայնքի ԱՌԿ պլանի մշակման, ճշգրտման և խորհրդի անդամների կողմից բարձրացված հարցերը կամ Համայնքի ԱՌԿ պլանով սահմանված գործողությունների իրականացումը:

4) Համայնքի ԱՌԿ խորհրդի նիստի ժամանակ ԱՌԿ խորհրդի ոլորտային պատասխանատուները ներկայացնում են իրենց վերապահված ոլորտում կատարված աշխատանքները, առաջ եկած խնդիրները և առաջարկվող նոր միջոցառումները: Համայնքի ԱՌԿ պլանի մշակման, ճշգրտման ժամանակ պատասխանատու են իրենց ոլորտին վերաբերվող բաժինների համար, ինչպես նաև Համայնքի ԱՌԿ պլանի նախապատրաստական և արձագանքման մասերում իրենք կարգավորման ոլորտի միջոցառումների համար:

5) Համայնքի ԱՌԿ խորհրդի նիստերը գումարվում են տարվա ընթացքում առնվազն երկու անգամ, իսկ դրա անհնարինության դեպքում՝ ԱՌԿ խորհրդի ղեկավարի որոշմամբ:

6) Համայնքի ԱՌԿ խորհրդի նիստերը արձանագրվում են քարտուղարի կողմից և ներառվում են համայնքի ԱՌԿ պլանում:

**1. ԱՌԿ խորհրդի նախապատրաստական գործառույթներն են՝**

1) Համայնքի բնակչության, նյութական արժեքների պաշտպանության ապահովումը,
2) իրականացնում են համայնքի վտանգների, խոցելիության և կարողությունների բացահայտում,
3) ԱՌԿ պլանի մշակումը, իրականացման ապահովումը, վերահսկումը,

4) ԱՌՆ և աղետներին դիմակայելու կարողությունների զարգացումը,

5) Համայնքում ԱՌՆ միջավայրի և մշակույթի ձևավորումն ու դրանց տարածմանը,

6) աղետներին արձագանքման համակարգի ձևավորումն, այդ նպատակով փրկարարական, հրդեհաշիջման և անհրաժեշտ կենսապահովման միջոցների ձեռք բերման, կուտակման և նպատակային օգտագործման իրականացումը,

7) ԱՌԿ պլանի ինտեգրման ապահովումը համայնքի զարգացման ծրագրում,

8) համայնքի վաղազդարարման համակարգի ստեղծումն ու վերջինիս պահպանումը,

9) «Դիմակայուն համայնք» ստեղծելու նպատակով ԱՌՆ գործընթացներում տեղական հաստատությունների և բնակչության ակտիվ ներգրավվածության ապահովումը,

10) բնակչության համար արտակարգ իրավիճակներում վարքականոնների և պարտականությունների տարածումը, դրանց կիրառման ապահովումը,

11) նախապատրաստում է Համայնքի բնակչությանը կատարելու փրկարարական և հրդեհաշիջման պարզագույն աշխատանքներ,

12) իրականացնում է հրդեհների կանխարգելման աշխատանքներ՝ բնակչության իրազեկման և ուսուցման միջոցով,

13) կազմակերպում և անցկացնում է վարժանքներ:

## 2. ԱՌԿ խորհրդի արձագանքման գործառույթներն են՝

1) Համայնքի բնակչության ազդարարման իրականացումը,

2) Արտակարգ իրավիճակների ժամանակ տեղեկատվության փոխանակման իրականացումը,

3) Համայնքի բնակչության տարահանման իրականացումը,

4) կազմակերպում է հատուկ կարիքավոր մարդկանց, հղի կանաց և երեխաների անվտանգ տարահանումը/պատսպարումը,

5) իր իրավասության շրջանակներում կազմակերպում է որոնման, փրկման և հրդեհաշիջման աշխատանքներ,

6) կազմակերպում է բնակչության նյութական և հասարակական արժեքների պահպանությունը, անվտանգության ապահովումը փրկարարական գործողությունների և տարահանման վայրերում,

7) դիակապտության, թալանի, բռնության և այլ հանցավոր երևույթների կանխումը,

8) շինարարական աղբի տեղափոխումը,

9) ճանապարհների մաքրումը և նոր տարանցիկ ճանապարհների հիմնումը,

10) արտակարգ իրավիճակի հետևանքով առաջացած շինարարական աղբի մաքրում համայնքի տարածքից ու ճանապարհներից, նոր տարանցիկ ճանապարհների հիմնում, կամուրջների վերականգնում,

11) առաջին օգնության իրականացումը,

12) սանիտարահիգիենիկ և համաճարակային վիճակի հսկողություն,

բնակչությանը սննդով, ջրով, դեղորայքով և առաջին անհրաժեշտության պարագաներով ապահովումը,

14) ջրային և սննդամթերքի պաշարների կուտակումը և նպատակային օգտագործումը:

15) բնակչության կոմունալ-էներգետիկ ապահովումը,

16) տուժած տարածքների գազամատակարարման և էներգամատակարարման [illegible] կազմակերպումը, անհրաժեշտության դեպքում առանձին [illegible]ներում դրանց դադարեցումը,

17) դիակների հուղարկավորման համար հողհատկացման և հուղարկավորման կազմակերպումը,

18) կորած, միայնակ մնացած երեխաների հայտնաբերումը, գրանցումը և ուղղորդումը համապատասխան սոցիալական ծառայություններ,

19) կազմակերպում է երեխաների վերամիավորումն ընտանիքներին:

20) աղետից հետո կազմակերպում է ստեղծված իրավիճակի, շենքերի, շինությունների, կամուրջների, թունելների և այլ առանցքային հանգույցների տեխնիկական վիճակի [illegible],

21) վնասի և կարիքների վաղ գնահատումը և հայտերի ներկայացումը մարզային կամ հանրապետական հանձնաժողովին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՇԵՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 02

« 25 » Հունվարի 2018թ.

## ՇԵՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2018թ.-Ի ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ԲԱՇԽՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածով և հիմք ընդունելով Շենավան համայնքի ավագանու 24.01.2018թ. թիվ 02-Ն որոշումը.

Ո ր ո շ ու մ եմ՝

Հաստատել Շենավան համայնքի 2018թ.-ի տարեկան բյուջեի եկամուտների և ծախսերի բաշխումը ըստ եռամսյակների՝ համաձայն հավելվածների:

Համայնքի ղեկավար Գ. Դունամալյան

Շենավան համայնքի ղեկավարի «____»հունվարի 2018թ. թիվ ____ որոշման

Շենավան համայնքի 2018թ. բյուջեի եկամտային(մուտքային) մասի բաշխումը ըստ եռամսյակների

(հազար դրամով)

| Տողի NN | Եկամտատեսակները | Հոդված NN | Ընդամենը այդ թվում՝ | | | | վարչական մաս այդ թվում՝ | | | | ֆոնդային մաս այդ թվում՝ | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | 1-ին եռ | կիսամյակ | 9 ամիս | տարի | 1-ին եռ | կիսամյակ | 9 ամիս | տարի | 1-ին եռ | կիսամյակ | 9 ամիս | տարի |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 |
| 1000 | ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ (տող 1100 + տող 1200+տող 1300) | | 2577.5 | 5120.0 | 7358.5 | 10308.7 | 2577.5 | 5120.0 | 7358.5 | 10308.7 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 1100 | 1. ՀԱՐԿԵՐ ԵՎ ՏՈՒՐՔԵՐ | 7100 | 501.1 | 957.8 | 1115.3 | 1958.6 | 501.1 | 957.8 | 1115.3 | 1958.6 | X | X | X | X |
| 1110 | 1.1 Գույքային հարկեր անշարժ գույքից | 7131 | 249.1 | 556.3 | 393.3 | 780.6 | 249.1 | 556.3 | 393.3 | 780.6 | X | X | X | X |
| 1111 | Գույքահարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող շենքերի և շինությունների համար | | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | | | | 0.0 | X | X | X | X |
| 1112 | Հողի հարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող հողի համար | | 249.1 | 556.3 | 393.3 | 780.6 | 249.1 | 556.3 | 393.3 | 780.6 | X | X | X | X |
| 1120 | 1.2 Գույքային հարկեր այլ գույքից | 7136 | 248.0 | 394.0 | 710.0 | 1158.0 | 248.0 | 394.0 | 710.0 | 1158.0 | X | X | X | X |
| 1121 | Գույքահարկ փոխադրամիջոցների համար | | 248.0 | 394.0 | 710.0 | 1158.0 | 248.0 | 394.0 | 710.0 | 1158.0 | X | X | X | X |
| 1130 | 1.3 Ապրանքների օգտագործման կամ գործունեության իրականացման թույլտվության վճարներ | 7145 | 4.0 | 7.5 | 12.0 | 20.0 | 4.0 | 7.5 | 12.0 | 20.0 | X | X | X | X |
| 1131 | Տեղական տուրքեր | 71452 | 4.0 | 7.5 | 12.0 | 20.0 | 4.0 | 7.5 | 12.0 | 20.0 | X | X | X | X |
| 1137 | դ) Համայնքի տարածքում ոգելից խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի, իսկ հանրային սննդի օբյեկտներում՝ ոգելից խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի իրացման թույլտվության համար | | 4.0 | 7.5 | 12.0 | 20.0 | 4.0 | 7.5 | 12.0 | 20.0 | X | X | X | X |
| 1150 | 1.4 Ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից այլ պարտադիր վճարներ | 7146 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | X | X | X | X |
| 1160 | 1.5 Այլ հարկային եկամուտներ | 7161 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | X | X | X | X |
| 1200 | 2. ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ | 7300 | 2021.4 | 4042.2 | 6063.2 | 8084.3 | 2021.4 | 4042.2 | 6063.2 | 8084.3 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 1250 | 2.5 Ընթացիկ ներքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված կառավարման այլ մակարդակներից | 7331 | 2021.4 | 4042.2 | 6063.2 | 8084.3 | 2021.4 | 4042.2 | 6063.2 | 8084.3 | X | X | X | X |
| 1251 | ա) Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ | | 2021.4 | 4042.2 | 6063.2 | 8084.3 | 2021.4 | 4042.2 | 6063.2 | 8084.3 | X | X | X | X |
| 1300 | 3. ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ | 7400 | 55.0 | 120.0 | 180.0 | 265.8 | 55.0 | 120.0 | 180.0 | 265.8 | | | | |
| 1310 | 3.1 Տոկոսներ | 7411 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | X | X | X | X | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 1320 | 3.2 Շահաբաժիններ | 7412 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 1330 | 3.3 Գույքի վարձակալությունից եկամուտներ | 7415 | 50.0 | 110.0 | 165.0 | 185.8 | 50.0 | 110.0 | 165.0 | 185.8 | X | X | X | X |
| 1331 | Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձավճարներ | | 50.0 | 110.0 | 165.0 | 185.8 | 50.0 | 110.0 | 165.0 | 185.8 | X | X | X | X |
| 1340 | 3.4 Համայնքի բյուջեի եկամուտներ ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից | 7421 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | X | X | X | X |
| 1350 | 3.5 Վարչական գանձումներ | 7422 | 5.0 | 10.0 | 15.0 | 80.0 | 5.0 | 10.0 | 15.0 | 80.0 | X | X | X | X |
| 1351 | Տեղական վճարներ | | 5.0 | 10.0 | 15.0 | 80.0 | 5.0 | 10.0 | 15.0 | 80.0 | X | X | X | X |
| 1360 | 3.6 Մուտքեր տույժերից, տուգանքներից | 7431 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | X | X | X | X |
| 1370 | 3.7 Ընթացիկ ոչ պաշտոնական դրամաշնորհներ | 7441 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | X | X | X | X |

| | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1380 | 3.8 Կամավոր ոչ պաշտոնական դրամաշնորհներ | 7442 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | X | X | X | X | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 1390 | 3.9 Այլ եկամուտներ | 7451 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 1392 | Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումներից մուտքեր | | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | X | X | X | X | | | | 0.0 |
| 1393 | Օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված՝ համայնքի բյուջե մուտքագրման ենթակա այլ եկամուտներ | | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | | | | 0.0 | | | | 0.0 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ ՀԱՎԵԼՈՒՐԴԸ ԿԱՄ ԴԵՖԻՑԻՏԸ (ՊԱԿԱՍՈՒՐԴԸ) | | 601.5 | 601.5 | 601.5 | 601.5 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 601.5 | 601.5 | 601.5 | 601.5 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ ՄՈՒՏՔԵՐ | | 3179.0 | 5721.5 | 7960.0 | 10910.2 | 2577.5 | 5120.0 | 7358.5 | 10308.7 | 601.5 | 601.5 | 601.5 | 601.5 |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ____________ (ստորագրություն) Գ. Դունամալյան

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԵՏ (ԳԼԽԱՎՈՐ ՀԱՇՎԱՊԱՀ) ____________ (ստորագրություն) Ն. Աբրահամյան

Կ.Տ.

Հավելված 2

Շենավան համայնքի ղեկավարի «25»հունվարի 2018թ. թիվ 2 որոշման

Շենավան համայնքի 2018թ. բյուջեի ելքային(ծախսային) մասի բաշխումը ըստ եռամսյակների

(հազար դրամներով)

| Բաժին | Խումբ | Դաս | Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի անվանումները | Ընդամենը, այդ թվում՝ | | | | Վարչական մաս, այդ թվում՝ | | | | Ֆոնդային մաս, այդ թվում՝ | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | 1-ին եռ | կիսամյակ | 9 ամիս | տարի | 1-ին եռ | կիսամյակ | 9 ամիս | տարի | 1-ին եռ | կիսամյակ | 9 ամիս | տարի |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 |
| X | X | X | ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ (տող2100+տող2200+տող2300+տող2400+տող2500+տող2600+ տող2700+տող2800+տող2900+տող3000+տող3100) | 3179.0 | 5721.5 | 7960.0 | 10910.2 | 2577.5 | 5120.0 | 7358.5 | 10308.7 | 601.5 | 601.5 | 601.5 | 601.5 |
| 01 | 0 | 0 | ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ (տող2110+տող2120+տող2130+տող2140+տող2150+տող2160+տող2170+տող2180) | 3479.0 | 5851.5 | 7720.0 | 10103.5 | 2377.5 | 4750.0 | 6618.5 | 9002.0 | 1101.5 | 1101.5 | 1101.5 | 1101.5 |
| | | | այդ թվում՝ | | | | | | | | | | | | |
| 01 | 1 | 0 | Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում, ֆինանսական և հարկաբյուջետային հարաբերություններ, արտաքին հարաբերություններ | 2377.5 | 4750.0 | 6618.5 | 9002.0 | 2377.5 | 4750.0 | 6618.5 | 9002.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| | | | որից՝ | | | | | | | | | | | | |
| 01 | 1 | 1 | Օրենսդիր և գործադիր մարմիններ,պետական կառավարում | 2377.5 | 4750.0 | 6618.5 | 9002.0 | 2377.5 | 4750.0 | 6618.5 | 9002.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 01 | 3 | 0 | *Ընդհանուր բնույթի ծառայություններ* | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| | | | որից՝ | | | | | | | | | | | | |
| 01 | 3 | 3 | Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | | | | |
| 01 | 6 | 0 | *Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող)* | 1101.5 | 1101.5 | 1101.5 | 1101.5 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 1101.5 | 1101.5 | 1101.5 | 1101.5 |
| | | | որից՝ | | | | | | | | | | | | |
| 01 | 6 | 1 | Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող) | 1101.5 | 1101.5 | 1101.5 | 1101.5 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 1101.5 | 1101.5 | 1101.5 | 1101.5 |
| 02 | 0 | 0 | ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ (տող2210+2220+տող2230+տող2240+տող2250) | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 03 | 0 | 0 | ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳ, ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԴԱՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 04 | 0 | 0 | ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (տող2410+տող2420+տող2430+տող2440+տող2450+տող2460+տող2470+տող2480+տող2490) | -780.0 | -760.0 | -720.0 | -720.0 | 20.0 | 40.0 | 80.0 | 80.0 | -800.0 | -800.0 | -800.0 | -800.0 |
| | | | այդ թվում՝ | | | | | | | | | | | | |
| 04 | 2 | 0 | *Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն, ձկնորսություն և որսորդություն* | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| | | | որից՝ | | | | | | | | | | | | |
| 04 | 2 | 1 | Գյուղատնտեսություն | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 04 | 5 | 0 | *Տրանսպորտ* | 20.0 | 40.0 | 80.0 | 80.0 | 20.0 | 40.0 | 80.0 | 80.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| | | | որից՝ | | | | | | | | | | | | |
| 04 | 5 | 1 | Ճանապարհային տրանսպորտ | 20.0 | 40.0 | 80.0 | 80.0 | 20.0 | 40.0 | 80.0 | 80.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 04 | 9 | 0 | *Տնտեսական հարաբերություններ (այլ դասերին չպատկանող)* | -800.0 | -800.0 | -800.0 | -800.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | -800.0 | -800.0 | -800.0 | -800.0 |
| | | | որից | | | | | | | | | | | | |